Culture & Creativity
EU-Eastern Partnership Programme

«ՄՇԱԿՈՒՅԹԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ» ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հայաստանի վերլուծական զեկույց

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագիրն իրականացվում է Բրիտանական խորհրդի կողմից զլխավորվող կոնսորցիումի կողմից՝ Մոլդովայի Սորոս հիմնադրամի, Լեհաստանի մշակույթի ազգային կենտրոնի և Գյոթե ինստիտուտի հետ համատեղ

Մշակույթ և ստեղծարարություն
ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիր

Զեկույցը մշակվել է ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ:

Սույն զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Հրատարակությունում զետեղված տեղեկատվության և տեսակետների համար ողջ պատասխանատվությունը կրում են հեղինակները:

Զեկույցը հրապարակվել է 2017 թվականի նոյեմբերին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մշակույթը զարգացման համար» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշները (CDIS) շահերի ջատագովության և քաղաքականության գործիք է՝ մշակված 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի քարտուղարության շրջանակներում: Մշակութային ոլորտի ցուցանիշները մշակութային և ստեղծարար ոլորտների հնարավորությունները գնահատելու համար միջազգայնորեն կիրառվող ելակետային տվյալներ են: Դրանք երկրներին հնարավորություն են ընձեռում առավել մրցունակ լինել միջազգային շուկայում, խթանել տեղեկատվության փոխանակումը որոշում կայացնողների, քաղաքացիական հասարակության և առևտրային ոլորտի միջև, բացահայտում են մշակութային գործիչների գիտելիքային բացերը և կարիքները, ինչպես նաև բացահայտում են մշակութային և ստեղծարար ոլորտներում հնարավոր ցանցերը, լավագույն փորձը և բացերը: CDIS-ը փորձարկվել և իրականացվել է 11 երկրում սկսած 2009 թվականից և որակական ու քանակական տվյալների միջոցով մատնանշում է մշակույթի՝ կարողություն զարգացնող և խթանող դերը կայուն զարգացման գործում: CDIS-ի հիմնական նպատակներն են՝

- ներկայացնել պատճառաբանված հիմնավորում մշակույթն ազգային և միջազգային զարգացման ռազմավարություններում և ծրագրերում ներառելու համար,
- հավաքագրել նոր տվյալներ՝ մշակույթի ոլորտում փաստերի վրա հիմնված քաղաքականություն և մշտադիտարկման համակարգեր մշակելու նպատակով,
- զարգացնել մշակույթի և զարգացման ոլորտի տվյալների հավաքագրման ու վերլուծության կարողությունները,
- խթանել կայուն զարգացման գործում մշակույթի դերի մասին իրազեկությունը միջգերատեսչական երկխոսության միջոցով,
- խթանել համատիպ փոխըմբռնում միջազգային մակարդակում:

CDIS մեթոդաբանությունն ուսումնասիրում է հետևյալ յոթ հիմնական բնագավառները. տնտեսություն, կրթություն, կառավարում, սոցիալական մասնակցություն, գենդերային հավասարություն, հաղորդակցություն և ժառանգություն:

CDIS-ի մասին լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ հղումով՝ www.unesco.org/creativity/cdis.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ **3**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ **4**

Համառոտ արդյունքները **5**

Տնտեսության ցուցանիշներ **8**
1 – Մշակութային միջոցառումների մասնաբաժինը ՀՆԱ-ում 8
2 – Զբաղվածությունը մշակույթի ոլորտում 10
3 – Տնային տնտեսությունների ծախսերը մշակույթի գծով 12

Կրթության ցուցանիշներ **14**
4 – Ներառական կրթություն՝ 0.91/1 (2005թ.) 14
5 – Բազմալեզու կրթություն՝ 43.48% (2015-2016թթ.) 15
6 – Արվեստի կրթություն՝ 8.33% (2015-2016թթ.) 16
7 –Մասնագիտական վերապատրաստումը մշակույթի ոլորտում՝ 1/1 (2015-2016թթ.) 16

Կառավարման ցուցանիշներ **18**
8 – Ստանդարտներ սահմանող շրջանակ մշակույթի համար 19
9 – Մշակույթի քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակ 20
10 –Մշակութային ենթակառուցվածքների բաշխվածություն 21
11 – Քաղաքացիական հասարակության մասնակցությունը մշակույթի կառավարմանը 22

Սոցիալական մասնակցության ցուցանիշներ **24**
12 – Արտագնա մշակութային միջոցառումներին մասնակցությունը 24
13 – Ինքնության ձևավորմանն ուղղված մշակութային միջոցառումներին մասնակցությունը 25
14 – Այլ մշակույթների նկատմամբ հանդուրժողականություն 25
15 – Միջանձնային վստահություն 26
16 – Ինքնորոշման ազատություն 27

Գենդերային հավասարության ցուցանիշներ **28**
17 – Գենդերային հավասարության օբյեկտիվ արդյունքները 28
18 – Գենդերային հավասարության ընկալումը 29

Հաղորդակցության ցուցանիշներ **31**
19 – Ինքնարտահայտման ազատություն 31
20 –Հասանելիությունը և համացանցի տարածումը 32
21 – Գեղարվեստական բովանդակության բազմազանությունը Հանրային հեռուստատեսության ծրագրերում 33

Ժառանգության կայունության ցուցանիշներ **35**
22 – Ժառանգության կայունությունը՝ 0.71/1 (2016թ.) 35

ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերջին տարիներին Հայաստանում գնալով ավելի շատ է կարևորվում մշակույթի դերը զարգացման գործում: Մարտահրավերը՝ մշակույթի բոլոր առավելությունները ճանաչելն է, ինչպես նաև մշակույթն ազգային զարգացման ծրագրերում և քաղաքականության մեջ որպես վճռորոշ և կայուն բաղադրիչ մշտապես ներառելը: Այդ համատեքստում, CDIS ծրագիրը մեկնարկեց Հայաստանում 2016 թվականի մայիսին և համախմբեց ավելի քան 50 շահագրգիռ անձանց, որոնք ներգրավված են տվյալների հավաքագրման գործընթացում, և որոնց հետաքրքրում է մշակույթի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում:



1 ՀՆԱ

2 Զբաղվածություն

3 Տնային տնտեսությունների ծախսեր

4 Ներառական կրթություն

5 Բազմալեզու կրթություն

6 Արվեստի կրթություն

7 Մասնագիտական վերապատրաստում

8 Ստանդարտներ սահմանող շրջանակ

9 Քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակ

10 Ենթակառուցվածքներ

11 Քաղաքացիական հասարակությունը կառավարման գործընթացում

12 Մասնակցություն արտագնա միջոցառումներին

13 Մասնակցություն ինքնության ձևավորմանը

14 Միջմշակութային հանդուրժողականություն

15 Միջանձնային վստահություն

16 Ինքնորոշում

17 Գենդերային հավասարության արդյունքներ

18 Գենդերային հավասարության ընկալում

19 Ինքնարտահայտման ազատություն

20 Համացանցի տարածումը

21 Գեղարվեստական բազմազանությունը հեռուստատեսության ծրագրերում

22 Ժառանգության կայունությունը

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇ

ՏՎՅԱԼ ՉԿԱ

2017 թվականի փետրվարին ստացված արդյունքները մշակույթի և զարգացման վերաբերյալ բազմաթիվ նոր տվյալներ են տրամադրում՝ հնարավորություն ընձեռելով էմպիրիկ կերպով ներկայացնել մշակույթի բազմակողմանի ներդրումը զարգացման գործում՝ չսահմանափակվելով զբոսաշրջության միջոցով մշակութային ժառանգության տնտեսական ներուժի տեսակետով: Մասնակցային իրականացման գործընթացը բացահայտեց ազգային վիճակագրական և մշտադիտարկման համակարգերի բացերը՝ մատնանշելով ազգային քաղաքականությունը լրամշակելու նպատակով դրանք հզորացնելու ու գիտելիքների հենքը ամրապնդելու ուղիները:

Մշակույթի դերը կարևոր է Հայաստանում. CDIS ցուցանիշներն ընդգծում են Հայաստանի մշակութային ոլորտի ներուժը տնտեսական զարգացման և բարեկեցության գործում և վեր հանում այն արգելքները, որոնք խոչընդոտում են ներուժի լիարժեք դրսևորմանը:

Համաձայն արդյունքների՝ մշակույթը նշանակալի մասնաբաժին ունի ազգային տնտեսության և համախառն ներքին արդյունքի կազմում (ՀՆԱ-ի 3.33%), չնայած ներկայիս տվյալների հիման վրա հնարավոր չէ գնահատել մշակույթի ազդեցության լիարժեք դերը: Մշակույթի ոլորտում զբաղվածությունը դիտարկելիս ստանում ենք առավել խորը պատկերացում, քանի որ 4.86 տոկոսի արդյունքն ապացուցում է մշակույթի բարձր կարևորությունը տնտեսության համար՝ ծառայելով որպես աղքատության նվազեցման միջոց:

Հայաստանում կրթության, մշակույթի և զարգացման միջև փոխկապակցվածության ուսումնասիրությունը դրական արդյունքներ է արձանագրել, որոնք արտացոլում են Հայաստանի իշխանությունների համար բնակչությանը բարձր մակարդակի կրթությամբ ապահովելու առաջնահերթությունը: Ներառականության ցուցիչը բավական բարձր է (0.91/1), մշակութային վերապատրաստման բոլոր տեսակներն առկա են: Բազմալեզու և արվեստի կրթությունը նույնպես առավելագույն ուշադրության են արժանանում:

Թեև ստանդարտներ սահմանող շրջանակի ու քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակի, ինչպես նաև մշակութային կառավարման գործում քաղաքացիական հասարակության մասնակցությանը վերաբերող ցուցանիշների մասով դրական արդյունքները (0.88/1; 1/1; 0.95/1) ենթադրում են, որ մշակութային կառավարումը կայուն հիմքի վրա է գտնվում, այդուհանդերձ Հայաստանում մշակութային ենթակառուցվածքների բաշխման մասով մշտական խոչընդոտներ կան (0,49/1), որը ոչ միայն նվազեցնում է մշակույթի հասանելիությունը, այլև խաթարում է մշակութային արտադրության, բաշխման և գործածման հնարավորությունները:

Հասարակության մասնակցության ցուցանիշները սահմանում են հասարակական հարաբերությունների բնույթը և որակը՝ իրենց ազդեցությունը թողնելով անհատների և համայնքների ինտեգրման, բազմազանության նկատմամբ հանդուրժողականության, վստահության և համագործակցության վրա: Այս առումով արդյունքները գոհացուցիչ չեն. արտագնա մշակութային միջոցառումներին մասնակցելն այնքան էլ տարածված չէ, այլ մշակույթների նկատմամբ հանդուրժողականությունը, ինչպես նաև միջանձնյա վստահությունը

հասարակությունում ցածր մակարդակի վրա են գտնվում: Դա պայմանավորում է հասարակության փակ լինելը և խոչընդոտներ է ստեղծում անհատների ինքնորոշման համար (ինքնորոշման ազատության ցուցանիշը Հայաստանում կազմում է 6.36/10):

Որպես ինքնարտահայտման ու կարիքների բավարարման միջոց մշակույթի ներուժը բարեկեցության ապահովման գործում լիարժեք օգտագործելու նպատակով՝ հարկավոր է գործողություններ ձեռնարկել՝ ինքնարտահայտման ազատությանը (37/100) նպաստող քաղաքական, տնտեսական, իրավական, հասարակական և մշակութային իրավիճակները բարելավելու համար:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշներ	Նկարագրություն
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՀՆԱ-ՈՒՄ	• Մասնավոր ու պաշտոնական մշակութային միջոցառումների տոկոսը ՀՆԱ-ի կազմում
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ	• Մշակութային մասնագիտություն ունեցող մարդկանց տոկոսը բնակչության ընդհանուր զբաղվածության կազմում
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԾՈՎ՝	• Մշակութային միջոցառումների, ապրանքների ու ծառայությունների գծով տնային տնտեսությունների ծախսերի տոկոսը տնային տնտեսությունների ընդհանուր ծախսերի կազմում

Հետարդյունաբերական տնտեսություններում ստեղծարար և մշակութային ճյուղերը դինամիկ և արագ ընդլայնվող ոլորտներ են և աստիճանաբար առավել կարևոր դեր են կատարում:

Այդ ճյուղերը խթանում են տնտեսական աճը՝ նպաստելով ազգային տնտեսության բազմազանեցմանը, ստեղծելով եկամուտ և զբաղվածություն, ինչպես նաև բավարարելով հաճախորդների՝ մշակութային ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկը: Ստեղծելով ստեղծարար դրսևորման, փորձարկման և ձեռնարկատիրության հնարավորություններ՝ դրանք խթանում են երկրի ստեղծարար և սոցիալական կապիտալի աճը: Այնուհետև, նպաստելով խորհրդանշական բովանդակության ստեղծմանը, արտադրությանը, փոխանցմանն ու սպառմանը, դրանց ազդեցությունը տարածվում է նաև ոչ տնտեսական օգուտների վրա: Սույն ուսումնասիրությունն առաջին քայլն է՝ հասկանալու և գնահատելու Հայաստանի տնտեսության համար մշակութային և ստեղծարար ոլորտների ներուժը: Այդ նպատակով, համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի CDIS մեթոդաբանության ձեռնարկի, Տնտեսության տարածաչափով ուսումնասիրվում են երեք հիմնական ցուցանիշներ. մշակութային միջոցառումների մասնաբաժինը ՀՆԱ-ում, զբաղվածությունը մշակութային ոլորտում և տնային տնտեսությունների ծախսերը մշակույթի գծով:

1 – Մշակութային միջոցառումների մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 3.33% (2014թ.)

Այս ցուցանիշը մշակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային վիճակագրության շրջանակի և CDIS մեթոդաբանության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրված 2014 թվականի ազգային հաշիվների վերաբերյալ տվյալների հիման վրա:

2014 թվականին Հայաստանում մշակութային գործունեությունը կազմում էր ՀՆԱ-ի 3.33 տոկոսը, ինչը վկայում է այն մասին, որ մշակույթը ազգային արտադրության կարևոր մաս է կազմում և նպաստում է եկամտի ստեղծմանն ու իր քաղաքացիների կենսագործունեության մակարդակի պահպանմանը: Չնայած մշակույթն արդեն իսկ աշխույժ ոլորտ է համարվում, այս ցուցանիշի իմաստով մշակույթի մասնաբաժինը ՀՆԱ-ում թերագնահատված է, քանի որ ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվել զուտ մասնավոր և պաշտոնական մշակութային միջոցառումները, իսկ ոլորտի անուղղակի և խթանիչ ազդեցությունը չի դիտարկվել: Այնուամենայնիվ, այս ցուցանիշը նոր արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում մշակութային ոլորտի շնորհիվ ստացվող օգուտների վերաբերյալ:



Ըստ մշակութային գործունեության տեսակների ՀՆԱ-ում մշակութային միջոցառումների հավելյալ արժեքի բաշխման վերլուծությունը բացահայտում է, որ ՀՆԱ-ում ամենախոշոր բաժինն ունեն տեսալսողական և ինտերակտիվ լրատվամիջոցները (78%)՝ հաշվի առնելով լարային և անլար հեռահաղորդակցման միջոցները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ծառայությունները պնդում են, որ անհրաժեշտ է պահպանել մշակութային բովանդակությունը փոխանակելու համար գործածվող տեխնոլոգիայի և հեռահաղորդակցման համակարգերը սնող մշակութային ստեղծարարության դինամիզմի միջև փոխկապակցվածությունը: Վերլուծության մեջ սարքավորումները և օժանդակ նյութերը հաշվի չառնելը մեզ թույլ է տալիս համեմատական հավելյալ արժեքների վերաբերյալ առավել միատեսակ պատկեր ստանալ:

Արտադրության կառուցվածքի ազգային դասակարգմանը համաձայն՝ մշակութային միջոցառումների կազմում վերախմբավորելով արվեստը, ժամանցն ու հանգիստը, մշակութային գործունեության շնորհիվ ստեղծված հավելյալ արժեքի մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում հաստատուն աճ է արձանագրել վերջին չորս տարվա ընթացքում: Հայաստանի մշակութային ռազմավարությամբ հաստատվում է, որ մշակույթի բնագավառը և դրա ճյուղերը կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ընդհանուր զարգացման վրա՝ հատկապես ապահովելով բազմաթիվ աշխատատեղեր և ստեղծելով սոցիալական օգուտներ: Մշակույթը և մշակութային ճյուղերը ռազմավարության մեջ սահմանվում են որպես «ներդրումների և անձնական զարգացման ոլորտ»: Տվյալների կանոնավոր հավաքագրումը և վիճակագրական համակարգի բարելավումը կարող են նպաստել ոլորտի կարևորության տեսանելիությանը, ինչպես նաև օժանդակել քաղաքականությամբ սահմանված նպատակների իրականացման մշտադիտարկմանը:



2 – Զբաղվածությունը մշակույթի ոլորտում՝ 4.86% (2015թ.)

Այս ցուցանիշի հիմքում ընկած են ՀՀ վիճակագրական ծառայության կողմից տրամադրված՝ 2015 թվականի աշխատուժի վերաբերյալ հարցման տվյալները:

2015 թվականի դրությամբ՝ ընդհանուր զբաղվածության կազմում մարդկանց մոտ 4.86 տոկոսը (52.1 հազար մարդ) ունի հիմնական աշխատանք մշակույթի ոլորտում: Մշակութային գործունեություն իրականացնող հաստատություններում աշխատող մարդկանց տոկոսը կազմում է 2.62 տոկոս (28.1 հազար մարդ):

Զբաղվածությունը Հայաստանի մշակույթի ոլորտում. Մշակութային գործունեություն իրականացնող հաստատությունում մշակութային մասնագիտությունը և զբաղվածությունը Հայաստանում

	Մշակութային գործունեությամբ զբաղվող հաստատություն	Մշակութային գործունեությամբ չզբաղվող հաստատություն	Ընդամենը
Մշակութային ոլորտի մասնագիտություններ	**7 733** (14.8%[1]) (27.5%[2])	**44 411** (85.2%) (4.2%)	**52 144** (100%) (4.86%)
Ոչ-մշակութային ոլորտի մասնագիտություններ	**20 333** (2%) (72.5%)	1 000 165 (98%) (95.8)	1 020 498 (100%) (95.14%)
Ընդամենը	**28 066** (2,62%) (100%)	1 044 576 (97.38%) (100%)	1 072 642 (100%) (100%)

[1] Մշակութային մասնագիտությունների տոկոսը
[2] Մշակութային հաստատությունների մասնագիտությունների տոկոսը

Մշակութային հաստատություններում ներգրավված աշխատուժը կազմում է որպես հիմնական աշխատանք մշակութային գործունեությամբ զբաղվող մարդկանց միայն 14.8 տոկոսը: Մյուս կողմից, մշակութային մասնագիտությունները կազմում են մշակութային հաստատություններում աշխատող մարդկանց 27.6 տոկոսը: Դա վկայում է այն փաստի մասին, որ մշակութային մասնագիտությամբ զբաղվող մարդկանց մեծամասնությունը չի աշխատում զուտ մշակութային գործունեություն իրականացնող հաստատություններում. նրանք կարող են հանդես գալ որպես անհատ աշխատողներ և (կամ) աշխատել ոչ մշակութային գործունեություն իրականացնող հաստատությունում:

Թեև այս արդյունքն արդեն իսկ ընդգծում է մշակույթի կարևոր դերը երկրի զբաղվածությունն ապահովելու հարցում, այնուհանդերձ մշակութային ոլորտի ընդհանուր ազդեցությունն զբաղվածության վրա այս ցուցանիշի մասով թերագնահատված է՝ տվյալների սահմանափակ ընտրության պատճառով[3]: Այդ տվյալը չի ընդգրկում ոչ մշակութային հաստատությունների բոլոր մշակութային մասնագիտությունները կամ այն մասնագիտությունները, որոնք սերտորեն առնչվում են մշակույթի ոլորտին, ինչպես, օրինակ՝ ժառանգության գոտիներին հարակից գտնվող հյուրընկալման ծառայությունների (ռեստորաններ և այլն) և հյուրանոցային ծառայությունների աշխատողները: Վիճակագրական հաշվետվություններում ներառված չեն ոլորտում ներգրավված արվեստագետները:

Վերլուծելով Հայաստանում մշակույթի ոլորտում ներգրավված մասնագետների գենդերային հարցը՝ նկատում ենք, որ առկա է գենդերային հավասարություն. 51.4 տոկոսը կազմում են կանայք, իսկ 48.6 տոկոսը՝ տղամարդիկ: Միաժամանակ, մշակութային գործունեություն իրականացնող հաստատություններում ներգրավված տղամարդկանց թիվը (54.7%) աննշան գերազանցում է կանանց թիվը (45.3%):

Մշակութային մասնագիտություն ունեցող մարդկանց տոկոսը բնակչության ընդհանուր զբաղվածության կազմում



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական ծառայության աշխատուժի վերաբերյալ հարցում (2015)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

[3] Տ՛ես Տեխնիկական հաշվետվությունները՝ հաշվարկի մեթոդին առնչվող լրացուցիչ մանրամասների համար

3 – Տնային տնտեսությունների ծախսերը մշակույթի գծով՝ 0.03% (2015թ.)

Հայաստանում տնային տնտեսության վերջնական սպառման ծախսերի 0.03 տոկոսը 2015 թվականին ուղղվել է մշակութային ապրանքի կամ ծառայության ձեռքբերմանը: Մշակութային միջոցառումների, ապրանքների ու ծառայությունների մասով տնային տնտեսությունների կրած անհատական սպառման ծախսերը թույլ են տալիս գնահատել մշակույթի համար ազգային շուկայի չափն ու ներուժը: Տնտեսական հոսքերը ցույց են տալիս, թե որքանով է հասարակությունն արժևորում մշակույթը: Ըստ շուկայական գործարքների թվի չենք կարող ենթադրել, որ Հայաստանում հասարակությունը մեծ տեղ է հատկացնում մշակութային ապրանքներին և ծառայություններին: Տնային տնտեսությունների ընդհանուր փաստացի սպառման կազմում 0.03 տոկոսի վերջնարդյունքը շատ ցածր է՝ այլ երկրների հետ համեմատ: Այս արդյունքը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ ցուցանիշի հետևյալ սահմանափակումները.

- Այն ընդգրկում է ներմուծումը
- Այն չի ընդգրկում արտահանման արժեքը
- Այն հաշվի չի առնում ոչ շուկայական ապրանքների մեծ մասը
- Այն չի ներառում մշակութային ապրանքների վրա կատարված որոշ ծախսերը, որոնք չեն ֆինանսավորվում ուղղակիորեն տնային տնտեսությունների կողմից, օրինակ՝ դիզայնի ծառայությունները և գովազդները

Այս ցուցանիշը չի պարփակում տնային տնտեսության սպառման ամբողջությունը՝ ծախսերի տեսանկյունից: Այնուհանդերձ, այն դեռևս հնարավորություն է ընձեռում գնահատել Հայաստանի սպառողների հիմնական ծախսերը մշակույթի ոլորտում:

Սպառման միտումներն առավել լավ հասկանալու նպատակով անհրաժեշտ է անցկացնել նոր հարցումներ՝ թարմացված տեղեկատվություն ապահովելու համար: Նաև օգտակար կլինի չմշակված տվյալները տրոհել ըստ սոցիալ-տնտեսական գործոնների, ինչպես, օրինակ՝ եկամտի քվինտիլները, կրթության մակարդակը և աշխարհագրական տարածքը, որպեսզի նպատակային քաղաքականությունը համալրվի մշակութային ապրանքների, ծառայությունների և միջոցառումների հավասար մատչելիության հնարավորությամբ, ինչպես նաև ներպետական շուկայի ներուժը լիարժեք կերպով շահագործվի:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում մշակույթի և տնտեսության միջև առկա կապը լիարժեք գնահատելու համար անհրաժեշտ է ունենալ ավելի լավ և ճշգրիտ վիճակագրություն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՀՆԱ-ՈՒՄ

- Հայկական մշակույթի ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում բավական մեծ է, այնուհանդերձ այն թերագնահատված է: Այս ցուցանիշը ներառում է միայն մասնավոր մշակութային միջոցառումների մասնաբաժինը ՀՆԱ-ում: Այն մշակութային միջոցառումները, որոնք իրականացվում են ոչ առևտրային կազմակերպություններում, հաշվարկների մեջ չեն ընդգրկվել:

- Այս ցուցանիշն առավել համոզիչ կլիներ, եթե այնտեղ ընդգրկվեր ապօրինի գործողությունների ծավալը, ինչպես, օրինակ՝ հեղինակային իրավունքի ոտնահարումը, և ստվերային տնտեսության բարձր մակարդակը Հայաստանում (համաձայն զանազան աղբյուրների այն կազմում է ՀՆԱ-ի 50 տոկոսը): Ստեղծարար և մշակութային ճյուղերում ստվերային տնտեսության բաժնեմասը, թերևս, ավելի մեծ է:

- Ուշադրությունից դուրս են մնում անուղղակի և խթանիչ ազդեցությունը, ինչպես նաև արտաքին ազդեցության գործոնները: Այսպիսով, անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություն իրականացնել ազգային տնտեսությունում մշակութային միջոցառումների մասնաբաժնի վերաբերյալ: Քաղաքականություն մշակելու տեսանկյունից հույժ կարևոր է նաև համեմատել ժամանակի ընթացքում արձանագրված աճն առանցքային տնտեսական ոլորտներում և մշակույթի ոլորտում:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Զբաղվածության վերաբերյալ առավել ամբողջական արդյունքներ արձանագրելու համար արդյունավետ կլիներ մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրող հարցումներ մշակել՝ հետագայում այդ տվյալները ըստ սոցիալ-տնտեսական գործոնների տրոհելու հնարավորությամբ, ինչպես, օրինակ՝ սեռը, կրթության մակարդակը, աշխարհագրական տարածքը և այլն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշ	Նկարագրություն
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	• Բնակչության 17-22 տարիքային խմբի կրթության միջինացված տարիների ցուցիչը՝ ճշգրտված անհավասարություններն արտացոլելու մասով
ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	• Բազմալեզվության խթանման համար հատկացված դասաժամերի տոկոսը լեզվի դասավանդմանը հատկացված ընդհանուր դասաժամերի կազմում (7-8 դասարաններ)
ԱՐՎԵՍՏԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	• Արվեստի կրթությանը հատկացված դասաժամերի տոկոսն ընդհանուր դասաժամերի կազմում (7-8 դասարաններ)
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	• Մշակույթի ոլորտում տեխնիկական ու նախնական մասնագիտական կրթության ու վերապատրաստման (TVET), ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգերի հետևողականության և տարածվածության ցուցիչը

Կրթությունը ոչ միայն անհատներին հնարավորություն է ընձեռում ձեռք բերել անհրաժեշտ հմտություններն ու գիտելիքը՝ լիիրավ քաղաքացի դառնալու համար, այլ այն նաև հիմնական իրավունք է: Այն էական դեր է կատարում գիտելիքահեն հասարակությունների առաջխաղացման գործում, որոնք ունակ են ապագայի մարտահրավերները հաղթահարելու համար նորարար լուծումներ առաջադրել: Կրթության ցիկլը նաև առանցքային միջավայր է հանդիսանում մշակութային արժեքների և կարողությունների ձևավորման, ուսուցման և փոխանցման գործում, որը կարող է խթանել հասարակական ներգրավվածությունը և հանդուրժողականությունը: Նմանապես, կրթությունն անհրաժեշտ է մշակութային բազմազանության առաջխաղացման և արժևորման, ինչպես նաև նոր և ստեղծարար տաղանդների քաջալերման համար:

Կրթության տարածաշափն ուսումնասիրում է կրթության, մշակույթի և մարդկային զարգացման միջև առկա կապը՝ գնահատելով կրթության ներառականությունը, միջմշակութային հաղորդակցման, մշակութային բազմազանության և ստեղծարարության արժևորումը, ինչպես նաև մշակույթի ոլորտում մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հնարավորությունները:

4 – Ներառական կրթություն՝ 0.91/1 (2005թ.)

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: (2-րդ գլուխ, 38-րդ հոդված):

2010 թվականին հրապարակված «Կրթություն բոլորի համար» միջազգային մշտադիտարկման զեկույցն օգտագործվել է 2005 թվականի տվյալների հիման վրա բնակչության 17-22 տարիքային խմբի կրթության միջինացված տարիների ճշգրտված ցուցիչը հաշվարկելու համար: Համաձայն այդ տվյալների՝ 17-22 թիրախային տարիքային խմբի կրթության տևողությունը կազմում է միջինում 9.2 տարի: Կատարվել է ճշգրտում՝ ըստ կրթության հնարավորությունից զրկվածության (4 տարուց պակաս կրթություն), և այն կազմում է բնակչության 1 տոկոսը:

0.91/1 արդյունքն արտացոլում է պետական իշխանությունների ջանքերը՝ կրթության հիմնական իրավունքը լիարժեք, արդար ու ներառական կերպով երաշխավորելու հարցում:

Այնուհանդերձ, նշենք, որ 2006 թվականին Հայաստանում ընդունվեց 12-ամյա դպրոցական կրթության մոդելը՝ նախկինում ընդունված 10-ամյա մոդելի փոխարեն: Ներկայացված արդյունքը պետք է վերահաշվարկվի նոր տվյալների հիման վրա:

5 – Բազմալեզու կրթություն՝ 43.48% (2015-2016թթ.)

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է (Սահմանադրության 1-ի գլուխ, 20-րդ հոդված): Ազգային փոքրամասնությունների ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքները երաշխավորվում են Սահմանադրությամբ (2-րդ գլխի 56-րդ հոդված): Այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունները կազմում են Հայաստանի ամբողջ բնակչության ընդամենը 1.8 տոկոսը: Ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդումն ընդգրկված է միայն փոքրամասնությունների դպրոցների (կամ դասարանների) հատուկ ծրագրերում:

Համաձայն 2015-2016 թվականների պաշտոնական ուսումնական ծրագրի՝ միջնակարգ դպրոցի առաջին երկու տարիների համար (5-6 դասարաններում) լեզուներին հատկացված անհրաժեշտ ժամաքանակից 56.52 տոկոսը պետք է հատկացվի պաշտոնական պետական լեզվի (հայերեն) դասավանդմանը: Մնացած 43.48 տոկոսը պետք է հատկացվի միջազգային լեզուների դասավանդմանը: Միջազգային լեզուների շարքում առաջին տեղն զբաղեցնում է ռուսերենը, որի դասավանդմանը հատկացված է լեզվի դասավանդման ժամաքանակի 26.09 տոկոսը: Մնացած ժամերը (17.39%) հատկացված են մյուս միջազգային լեզուների դասավանդմանը (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ օտար լեզու): Առաջին միջազգային լեզվի դասավանդումն սկսվում է տարրական դպրոցի երկրորդ դասարանից, իսկ երկրորդը՝ երրորդ դասարանից: Բոլոր միջազգային լեզուները դասավանդվում են կրթության հաջորդ բոլոր տարիներին:



Աղբյուրը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կրթական ծրագիր (2015-2016) Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

6 – Արվեստի կրթություն՝ 8.33% (2015-2016թթ.)

Համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2015-2016 թվականների կրթական ծրագրի՝ երկրի միջնակարգ դպրոցի առաջին երկու տարիներին դասաժամերի միջինում 8.33 տոկոսը պետք է հատկացվի արվեստի կրթությանը, ինչն արտացոլում է արվեստների և մշակույթի առաջնահերթության բավականին բարձր մակարդակը: Հինգերորդ և վեցերորդ դասարաններում դասաժամերի 38 տոկոսը հատկացված է լեզուներին, իսկ 27 տոկոսը՝ գիտություններին:

Հինգերորդ դասարանում ընդհանուր 986 (100%) դասաժամից արվեստին հատկացվում է 102-ը (10.34%)՝ ներառյալ երաժշտությունը, նկարչությունը և տեխնոլոգիան (յուրաքանչյուրը՝ 34 դասաժամ): Վեցերորդ դասարանում դասաժամերի ընդհանուր թիվը կազմում է 1054 (100%), որից ընդհանուր առմամբ 68 (6.45%) դասաժամ հատկացվում է արվեստին՝ ներառյալ 17 դասաժամ երաժշտությանը, 17 դասաժամ՝ նկարչությանը և 34 դասաժամ՝ տեխնոլոգիային: Ութերորդ դասարանից սկսած արվեստին հատկացված դասաժամեր չկան:



Աղբյուրը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կրթական ծրագիր (2015-2016) Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

7 –Մասնագիտական վերապատրաստումը մշակույթի ոլորտում՝ 1/1 (2015-2016թթ.)

Մշակույթի ոլորտում կրթության վերաբերյալ ցուցիչը մշակվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից ու հիմնական շահագրգիռ կողմերից ստացված տեղեկությունների հիման վրա: Այն հիմնականում արտացոլում է մշակույթի ոլորտում վերապատրաստման բազմազան տեսակների առկայությունը:

Հայաստանի 1/1 արդյունքն արտացոլում է պետական իշխանությունների իրական շահագրգռվածությունն ու կամքը՝ արվեստի գծով մասնագետների վերապատրաստմանն ուղղված ներդրումներ կատարելու հարցում: Պետության

կողմից ֆինանսավորվող 24 կրթական հաստատություններից (համալսարաններ և ինստիտուտներ) 6-ն առաջարկում են կրթական ծրագրեր մշակույթի ոլորտում: Գործում են մշակույթի տարբեր ուղղությունների մասով կրթություն ապահովող 22 նախնական մասնագիտական ուսումնարաններ (10-ը Երևանում, իսկ 12-ը՝ տարբեր մարզերում):

Այդուհանդերձ, կան որոշ հիմնախնդիրներ, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել: Դրանցից մեկը՝ մշակութային կառավարմանը, մշակութային արժեքների պահպանմանն ու պահպանությանը, հնչունային ու լուսային մշակմանը և ռեժիսուրային փոքր թվով դասաժամերի հատկացումն է: Մեկ այլ խնդիր է՝ երկրի հեռավոր մարզերում արհեստավարժ մասնագետների բացակայությունը:

ՀՀ կառավարության 2010 թվականի որոշմամբ ընդունվեց մշակույթի ոլորտում ներգրավված անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և որակավորման մասին համալիր ծրագիրը (ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի թիվ 73-Ն որոշում):

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշներ	Նկարագրություն
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ՍԱՀՄԱՆՈՂ ՇՐՋԱՆԱԿ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ	Մշակույթի, մշակութային իրավունքների և մշակութային բազմազանության պաշտպանությանն ու խթանման ուղղված ստանդարտներ սահմանող շրջանակի մշակման ցուցիչ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ	Մշակույթի, մշակութային իրավունքների և մշակութային բազմազանության պաշտպանությանն ու խթանման ուղղված քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակի մշակման ցուցիչ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	Ընտրված մշակութային ենթակառուցվածքների բաշխվածությունը՝ ուղղակիորեն պետական ենթակայության տակ գտնվող վարչական շրջանների բնակչության համեմատ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ	Մշակույթի ոլորտի մասնագետների և փոքրամասնությունների՝ նրանց վերաբերող մշակութային քաղաքականության, միջոցառումների և ծրագրերի ձևակերպման և իրականացման գործընթացին մասնակցելու խթանման ցուցիչ

Մշակութային կառավարումը ներառում է.

- մշակութային միջոցառումների կանոնակարգման ստանդարտներ սահմանող շրջանակների հանրագումարը,

- ներառական մշակութային զարգացմանը նպաստելու և մշակութային իրավունքները և բազմազանությունը խթանելու նպատակով պետական քաղաքականության, ենթակառուցվածքների, ինստիտուցիոնալ կարողությունների և գործընթացների առկայությունը,

- մշակութային ենթակառուցվածքի և դրա ճյուղավորումների բավարար մակարդակը ողջ երկրում,

- մշակութային քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին հանրային և քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցության հնարավորությունը:

Այս բոլոր չորս ասպեկտներն արտացոլում են այն պայմանները, որոնց ներքո իրացվում են այն խաղաղ հասարակությունների զարգացման համար անհրաժեշտ մշակութային իրավունքները, որոնցում անհատները հնարավորություն ունեն վարել լիարժեք, ստեղծարար կյանք՝ իրենց արժեքներին համահունչ: Թեև այս ասպեկտներից յուրաքանչյուրը ծայրահեղ կարևոր է, միայն դրանց համազդեցությունը կարող է ապահովել մշակութային ոլորտի պատշաճ զարգացում և մշակութային բազմազանություն, կարող է բավարարել բոլոր քաղաքացիների մշակութային պահանջները՝ անկախ նրանց բնակության վայրից, էթնիկ և սոցիալական պատկանելությունից, տարիքից, սեռից և այլն:

Այսպիսով, մշակույթի կառավարումն առաջնային դեր ունի մշակույթը ներառական, իրավունքահեն մարդկային զարգացմանը նպաստող տիրույթ դարձնելու գործում:

8 – Ստանդարտներ սահմանող շրջանակ մշակույթի համար՝ 0.88/1 (2016թ.)

Հայաստանի 0.88/1 արդյունքը ցույց է տալիս, որ արդեն իսկ առկա է մշակույթի համար բարձր ստանդարտ սահմանելու շրջանակ: Թեև ազգային մակարդակում հնարավոր է հավաստել 86 տոկոս ստանդարտ սահմանող շրջանակի ապահովումը, միջազգային մակարդակում այդ թիվը կազմում է մոտավորապես 93 տոկոս:



Այսպիսի բարձր ցուցանիշներն ապացուցում են Հայաստանում արդյունավետ մշակութային քաղաքականություն իրականացնելու օրենսդրական հիմքերի բազմակողմանիությունը, ժամանակակից սոցիալական և տնտեսական զարգացման ոլորտում մշակույթի դերի ընկալումը և մշակութային իրավունքներ ու մշակութային բազմազանություն ապահովող միջազգային սկզբունքների և մոտեցումների նկատմամբ հանձնառությունը:

Վերազգային մակարդակում միայն 4 չվավերացված փաստաթուղթ կա՝

1. UNIDROIT-ի գողացված կամ անօրինականորեն արտահանված մշակութային արժեքների մասին կոնվենցիան,
2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը,
3. Հեղինակային իրավունքի համընդհանուր կոնվենցիան:

Դժբախտաբար, մշակույթի ոլորտում բարձր մակարդակի ստանդարտներ սահմանող շրջանակը բավարար կերպով չի վերածվել պետական քաղաքականության արդյունավետ մեխանիզմների:

9 – Մշակույթի քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակը՝ 1/1 (2016թ.)

Մշակութային քաղաքականության և միջոցառումների ձևակերպման, իրականացման և կառավարման համար քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակի մշակման արդյունքը 100 տոկոս (1/1) է, ինչը համապատասխանում է սեփականաշնորհման, ապակենտրոնացման և ժողովրդավարացման եվրոպական սկզբունքներին, ինչպես նշված է 2014-2025թթ. Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի երկարաժամկետ ռազմավարությունում: Մի քանի նախարարություն է պատասխանատու մշակույթի ոլորտի համար կառավարման բոլոր մակարդակներում և ունի համապատասխան հատկացված բյուջե: Ռազմավարությունը գնահատում է հայաստանյան մշակութային ոլորտում առկա խնդիրները, սահմանում է բարեփոխման ուղղությունները, դրանց սկզբունքներն ու նպատակները, մասնավորեցնում է մշակույթի կառավարման և մշակութային ցանցի, մշակութային ժառանգության, թանգարանների, թատրոնների, գրադարանների և ընթերցանության հմտությունների, ֆիլմարտադրության, կերպարվեստի, երաժշտության, մշակութային ենթակառուցվածքի, միջազգային համագործակցության, հետազոտական և կրթական գործունեության, հեղինակի իրավունքի, հաղորդակցության և մշակույթի ոլորտում հանրային գործողությունների արդիականացմանը վերաբերող կոնկրետ միջոցառումները: Այս փաստաթուղթն առանձնացնում է ստեղծարար և մշակութային ճյուղերի հասկացությունը, մինչդեռ նախկինում մշակութային քաղաքականությունը կենտրոնացած է եղել մշակույթի ավանդական ընկալման վրա:

Մշակույթի ոլորտի զարգացումը ներառված է նաև Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որը հաստատվել է ՀՀ կառավարության 27.03.2014թ., թիվ 442-Ն որոշմամբ, ինչպես նաև 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում, 2017-2022թթ. կառավարության ծրագրում, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 19.06.2017թ. թիվ 646-Ա որոշմամբ:

Հայաստանում մշակույթի ոլորտն ազգային մակարդակում ներկայացված է թե՛ օրենսդրական իշխանության մարմնում (Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերով մշտական հանձնաժողով) և թե՛ գործադիր իշխանությունում՝ Հայաստանի մշակույթի նախարարություն:

Մշակույթը ներկայացված է բոլոր 11 վարչական շրջաններում (մարզերում) տեղական մակարդակում (քաղաք և գյուղ): Որպես կանոն, մշակույթը ներկայացված է տարածքային համայնքների ընտրովի մարմիններում (խորհուրդներում) մշակույթի հանձնաժողովների միջոցով և գործադիր մարմիններում (մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններում)՝ մշակույթի վարչությունների կամ բաժինների միջոցով: Բացառություն են կազմում փոքր համայնքները, որոնք չունեն առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ մշակույթի համար: Այստեղ քաղաքացիական ծառ

այողներն են պատասխանատու մշակութային քաղաքականության իրականացման համար: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով մշակույթի համար միջոցներ են հատկացվում:

Մշակույթի, մշակութային իրավունքների և մշակութային բազմազանության պաշտպանությանն ու խթանման ուղղված քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակի մշակման ցուցիչ

Վերջնական արդյունք՝ 1/1



Աղբյուրը՝ ՀՀ օրենսդրություն
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

10 –Մշակութային ենթակառուցվածքների բաշխվածությունը՝ 0.49/1 (2015թ.)

Հայաստանի վերջնական արդյունքը 0.49/1 է, որտեղ 1-ը ներկայացնում է այն իրավիճակը, որտեղ ընտրված ենթակառուցվածքը հավասարապես բաշխված է վարչական շրջանների միջև՝ ըստ բնակչության հարաբերական թվի: Կառավարության բոլոր մակարդակները մատուցում են մշակութային ծառայություններ պետական ֆինանսավորմամբ գործող մշակութային հաստատությունների միջոցով: 0.49/1 միավորն, այսպիսով, արտացոլում է այն հանգամանքը, որ Հայաստանի բոլոր վարչական շրջաններում առկա են բազմաթիվ մշակութային հաստատություններ, որոնք գտնվում են ուղղակիորեն պետական ենթակայության տակ, սակայն որոշակի շարունակական անհավասարություն է նկատվում Թանգարանների, կատարողական արվեստների ցուցասրահների և ցուցադրությունների կազմակերպման վայրերի, գրադարանների և լրատվամիջոցների կենտրոնների հասանելիության իմաստով:

Հայաստանը Խորհրդային Միությունից ժառանգել է մշակութային հաստատությունների առաջնային ցանցը: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ունի կամ գրադարան, կամ ակումբ, կամ երկուսն էլ մեկտեղ: Սա ապահովում է մշակութային ենթակառուցվածքների շինությունների համապատասխանաբար հավասար համաշահագործում: Այնուամենայնիվ, դրանց ֆիզիկական վիճակը հաճախ բավարար չէ:

Մշակութային ենթակառուցվածքների բաշխվածությունը՝ վարչական շրջանների բնակչության համեմատ (Համեմատական ստանդարտ շեղում)



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (2015)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

Ըստ Հայաստանի վարչական շրջանների/մարզերի և դրանցում ապրող բնակչության մշակութային ենթակառուցվածքների բաշխման միջին արժեքը համապատասխանաբար բարձր է՝ 0.49/1. այս արժեքը բավական բարձր է գրադարանների դեպքում՝ 0.57 և ավելի ցածր է ցուցադրությունների վայրերի դեպքում՝ 0.36:

Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել մայրաքաղաք Երևանի ցուցանիշներին, որտեղ կենտրոնացած է երկրի բնակչության 36 տոկոսը, սակայն այդտեղ են գտնվում բոլոր թանգարանների 64 տոկոսը, ցուցադրությունների կազմակերպման վայրերի 64 տոկոսը և գրադարանների 4 տոկոսը:

Մշակութային ենթակառուցվածքների նկատմամբ հասանելիության հավասարության մեծացումը կարող է նպաստել Հայաստանում բարեկեցությանը՝ ընձեռելով մշակութային և ստեղծարար գործունեությանը մասնակցելու ավելի շատ հնարավորություններ, որոնք նպաստավոր են երկրի համար տնտեսապես՝ մշակութային ապրանքների և ծառայությունների արտադրության և սպառման միջոցով և մասնակցության միջոցով դաստիարակելով երկրում առկա բազմապիսի մշակույթների նկատմամբ գնահատանք:

11 – Քաղաքացիական հասարակության մասնակցությունը մշակույթի կառավարմանը՝ 0.95/1 (2016թ.)

0.95/1 վերջնական արդյունքը ցույց է տալիս, որ բազմաթիվ հնարավորություններ կան թե՛ մշակույթի ոլորտի մասնագետների, թե՛ փոքրամասնությունների երկխոսության և ներկայացուցչության համար՝ նրանց վերաբերող մշակութային

քաղաքականության, միջոցառումների և ծրագրերի ձևակերպման և իրականացման առումով: Մշակույթի կառավարման ոլորտում մասնակցության այսպիսի հնարավորություններ կան ազգային, ինչպես նաև վարչական շրջանների մակարդակներում:

Իշխանություններն, ընդհանուր առմամբ, համագործակցում են թե մշակույթի ոլորտի մասնագետների, թե փոքրամասնությունների հետ ինստիտուցիոնալ մեխանիզմների և օրգանական կառույցների միջոցով: Մշակույթի նախարարությունը, մարզպետարանների և տեղական կառավարման մարմինների մշակույթի վարչությունները կամ բաժինները, ինչպես նաև ազգային և խոշոր մշակութային հաստատություններն ունեն հատուկ փորձագիտական խորհուրդներ և հանձնաժողովներ, հաճախ կոնկրետ ենթաոլորտի համար, օրինակ՝ ժառանգություն, մշակույթի ոլորտին մասնակցություն և հասանելիություն, մշակութային քաղաքականություն և ֆինանսներ: Շատ դեպքերում, այսպիսի կառույցների որոշումներն ունենում են վճռորոշ կշիռ: Մշակույթի ոլորտի մասնագետները կարող են իրենց ձայնը լսելի դարձնել նաև մշակութային միությունների միջոցով:

Ինչ վերաբերում է օրենսդրական իշխանությանը, ապա Մշակույթի խորհրդարանական հանձնաժողովը հանրային խորհուրդ ունի, որը մասնակցում է հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև անկախ փորձագետների բազա, որոնք հանձնաժողովին կամավոր հիմունքներով խորհրդատվություն են տրամադրում: Ընտրված պատգամավորներից կազմված տարածքային և տեղական/քաղաքային խորհուրդներն ունեն, որպես կանոն, նմանատիպ մշակույթի հանրային խորհուրդներ: Կառավարության՝ էթնիկ փոքրամասնությունների և կրոնական հարցերով զբաղվող ստորաբաժանումը սերտորեն համագործակցում է Հայաստանի մշակույթի նախարարության հետ և նախարարության՝ փոքրամասնությունների և կրոնական հարցերով հատուկ վարչության հետ: Նմանատիպ վարչություններ կամ ստորաբաժանումներ կան բոլոր մարզպետարաններում և տեղական ինքնակառավարման մարմիններում, որոնք սերտորեն համագործակցում են տեղական փոքրամասնությունների և նրանց միությունների հետ: Մշակութային փոքրամասնություններին աջակցելու համար յուրաքանչյուր տարի հատուկ բյուջետային ծրագիր է նախատեսվում Պետական բյուջեի մշակույթի գծով ծախսերի մասում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշներ	Նկարագրություն
ԱՐՏԱԳՆԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	• Վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ արտագնա մշակութային միջոցառմանը մասնակցած բնակչության տոկոսը
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	• Վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ ինքնության ձևավորմանն ուղղված մշակութային միջոցառմանը մասնակցած բնակչության տոկոսը
ԱՅԼ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	• Հասարակության կողմից այլ մշակույթ ներկայացնող մարդկանց նկատմամբ հանդուրժողականության աստիճանը
ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ	• Միջանձնային վստահության աստիճանը
ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	• Ինքնորոշման ազատության ընկալման միջնարժեքը

Մշակույթի դերը կարևոր է անհատների և համայնքների կյանքի որակի և բարեկեցության ապահովման և բարելավման հարցում: Մշակութային ավանդույթները, արժեքները և արտահայտությունն երն այն արժեքների, վերաբերմունքի և համոզմունքների ձևավորման, փոխանցման և վերամեկնաբանման հիմնական միջոցներն են, որոնցով անհատներն ու համայնքներն արտահայտում են իրենց կյանքի և սեփական զարգացման նշանակությունը:

Այս արժեքները, վերաբերմունքը և համոզմունքները ձևավորում են սոցիալական հարաբերությունների բնույթն ու որակը՝ ներազդելով անհատների և համայնքների միասնության զգացողության, բազմազանության նկատմամբ հանդուրժողականության, վստահության և համագործակցության վրա: Հանրային մասնակցության տարածաշափն ուսումնասիրում է այն բազմաչափ եղանակները, որոնցով մշակույթն ազդում է սոցիալական առաջընթացը և զարգացումը խթանող միջավայրերի պահպանման և ընդլայնման վրա՝ վերլուծելով մշակութային մասնակցության մակարդակները, տվյալ հասարակության ներսում փոխկապակցվածությունը, համերաշխության և համագործակցության զգացումը և անհատների՝ իրավազորման զգացողությունը:

12 – Արտագնա մշակութային միջոցառումներին մասնակցությունը՝ 22% (2015թ.)

Ցուցանիշի հաշվարկման համար ընտրվել են Կովկասյան բարոմետրի տվյալները: Ազգային մակարդակի ներկայացուցչական տվյալները հասանելի են 2008 թվականից ի վեր: Արտագնա մշակութային միջոցառումներին վերաբերող հարցն առկա է 2011 թվականից: Թանգարանային այցելություններին վերաբերող հարցերը («Այս միջոցառումներից որի՞ն եք մասնակցել նախորդ 6 ամսվա ընթացքում: - Գնացել եմ թանգարան/ պատկերասրահ») կա միայն 2011 թվականի համար: Երկրորդ հարցը վերաբերում է թե՛ թատրոնին, թե՛ կինոյին. «Այս մշակութային օջախներից որ՞ն եք այցելել նախորդ 6 ամսվա ընթացքում: – Գնացել եմ թատրոն/կինո»: Այդ մասին տվյալները հասանելի են 2011, 2012, 2013 և 2015 թվականների համար:

Արդյունքն արտացոլում է արտագնա մշակութային միջոցառումների վերջին տվյալները և վերաբերում է 2015 թվականին: Արդյունքը ցույց է տալիս, որ ՀՀ բնակչության 22 տոկոսը մասնակցել է արտագնա մշակութային միջոցառումներին: Թեև արդյունքն ինքնին ցածր է, Կովկասյան բարոմետրի տարբեր երկրների համեմատական տվյալների կազմը ցույց է տալիս, որ Հայաստանում արտագնա մշակութային միջոցառումներին մասնակցած անձանց տոկոսն ավելի բարձր է, քան հարևան երկրներում (2011, 2012, 2013, 2015 թվականներին):

Վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ արտագնա մշակութային միջոցառմանը մասնակցած բնակչության տոկոսը



Աղբյուրը՝ Կովկասյան բարոմետր (2015)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

13 – Ինքնության ձևավորմանն ուղղված մշակութային միջոցառումներին մասնակցությունը (տվյալներ չկան)

Ինքնության ձևավորմանն ուղղված մշակութային միջոցառումների շարքին են դասվում սիրողական մշակութային գործունեությունը, մշակութային միություններին անդամակցելը, ժողովրդական մշակույթով, էթնիկ մշակույթով, համայնքային մշակութային իրացման ձևերով զբաղվելը և երիտասարդական մշակույթը: Դժբախտաբար, անհնար էր այս ցուցանիշը հաշվարկել համապատասխան և հաստատված տվյալների բացակայության պատճառով: Անկասկած, հայերի ներգրավվածությունը նման գործունեության մեջ բարձր մակարդակի վրա է:

14 – Այլ մշակույթների նկատմամբ հանդուրժողականություն՝ 64.4% (2011թ.)

2011 թվականին Հայաստանի բնակչության 64.4 տոկոսը համաձայնեց, որ այլ մշակույթ կրող անձանց չեն համարի անցանկալի հարևան: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս գնահատել հանդուրժողականության աստիճանը և բազմազանության նկատմամբ բաց վերաբերմունքը՝ այսպիսով տվյալ հասարակությունում փոխկապակցվածության մակարդակների ներհայեցման հնարավորություն տալով: Ստացվածը 3 դասի, մասնավորապես՝ այլ ռասայի

ներկայացուցիչների, ներգաղթյալների/օտարերկրյա աշխատողների և այլ կրոն դավանողների խմբերին դասվող հարևանների վերաբերյալ հարցման մասնակիցների պատասխանների բաղադրյալ արդյունքն է:
Այս հարցերին առավել հանդուրժողական են վերաբերում 30–49 տարիքային խմբի ներկայացուցիչները:

Ուշագրավ է այն, որ ՀՀ բնակչության մեծ մասը հայեր են, իսկ ազգային փոքրամասնությունները կազմում են բնակչության միայն 1.8 տոկոսը:

Հասարակության կողմից այլ մշակույթ ներկայացնող մարդկանց նկատմամբ հանդուրժողականության աստիճանը



Աղբյուրը՝ Արժեքների համաշխարհային հարցում (2011)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

15 – Միջանձնային վստահություն՝ 10.9% (2011թ.)

2011 թվականին Հայաստանի բնակչության 10.9 տոկոսը համաձայնեց, որ մարդկանց մեծ մասին կարելի է վստահել: Արդյունքը ցույց է տալիս վստահության և համերաշխության ցածր մակարդակ: Արդյունքների տատանումներն զգալի չեն տարիքային կամ սեռային խմբերի համեմատությամբ: Կանանց 9.3 տոկոսը և տղամարդկանց 12.5 տոկոսը համաձայն են, որ մարդկանց մեծ մասին կարելի է վստահել: Միջանձնային վստահության ամենացածր արդյունքն արձանագրվել է 15-29 տարիքային խմբում (9.3%), իսկ ամենաբարձր արդյունքը՝ 12 տոկոս, գրանցվել է 50 և ավելի տարիքային խմբում:



Աղբյուրը՝ Արժեքների համաշխարհային հարցում (2011)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

16 – Ինքնորոշման ազատություն՝ 6.36/10 (2011թ.)

Հայաստանի արդյունքը 6.36/10 է, որտեղ 10-ը ներկայացնում է մի իրավիճակ, որտեղ անհատները հավատում են, որ կա «հսկողության ընտրության մեծ ազատություն», իսկ 1-ը նշանակում է «ընտրության և հսկողության ազատության բացակայություն»:



Աղբյուրը՝ Արժեքների համաշխարհային հարցում (2011)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

Գրեթե անհնար է որևէ տատանում տեսնել տարիքային խմբերի համեմատության ժամանակ: Միջնարժեքները համապատասխանաբար 7.11, 7.14, 7.22 են 15-29, 30-49, 50 և բարձր տարիքային խմբերի համար: Հարցման տղամարդ մասնակիցների համար միջնարժեքը 7.28 է, իսկ կին մասնակիցների համար՝ 6.94: Արդյունքը գրեթե հավասար է CDIS հարցումն անցկացրած բոլոր երկրների միջին արդյունքներին, որը կազմում է 6.67/10:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշներ	Նկարագրություն
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	Քաղաքական, կրթական և աշխատանքային ոլորտներում և գենդերային հավասարության օրենսդրական հենքում կանանց և տղամարդկանց միջև առկա բացերի ցուցիչ (օբյեկտիվ արդյունքներ)
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ	Գենդերային հավասարությունը դրական գնահատելու աստիճանը (սուբյեկտիվ արդյունքներ)

Գենդերային հավասարությունը ոչ միայն միջազգայնորեն է ճանաչված որպես կայուն զարգացման որոշիչ մաս. գենդերային հավասարությունը կարող է զուգահեռաբար վերաբերել մշակութային բազմազանության և մշակութային իրավունքների նկատմամբ հարգանքին, երբ այն դիտարկվում է մարդու իրավունքների շրջանակում ի նպաստ ներառականության և իրավունքների ու հնարավորությունների հավասար հասանելիության: Գենդերային հավասարության ապահովմանն ուղղված թիրախային քաղաքականությունը և միջամտությունները մեծապես ազդում են գենդերային դերերի նկատմամբ վերաբերմունքի և դրանց ընկալումների վրա, ինչպես նաև բարելավում են իրականում գենդերային հավասարության մակարդակները: Ավելին, մշակութային վերաբերմունքը և ընկալումները կարևոր դեր են կատարում նման քաղաքականության և միջոցառումների ուղղորդման համար: Այնուամենայնիվ, քաղաքականությունը պահանջում է հասարակության անդամների մասնակցությունը. քաղաքականությանը պետք է սատարեն համայնքի անդամները, որպեսզի այն լինի հաջողված և կայուն:

Գենդերային հավասարության տարածաշափն ուսումնասիրում է այն հարաբերակցություններն ու բացերը, որոնք առկա են գենդերային հավասարության խթանման և արժևորման միջև՝ թիրախավորված քաղաքականության և գործողությունների միջոցով, ինչպես նաև գենդերային հավասարության՝ մշակույթով պայմանավորված ընկալումներով:

17 – Գենդերային հավասարության օբյեկտիվ արդյունքները՝ 0.578/1 (2013-2015թթ.)

Հայաստանի 0.578 արդյունքը ցույց է տալիս քաղաքական, կրթական և աշխատանքային ոլորտներում և գենդերային հավասարության օրենսդրական հենքում կանանց և տղամարդկանց միջև միջինից մի փոքր ցածր մակարդակի բացի առկայություն: Հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել քաղաքական մասնակցությանը (11 տոկոս խորհրդարանական մակարդակում) և օրենսդրությանը: Թեև կանայք ավելի բարձր մակարդակի մասնակցություն են ունեցել վերջին տասնամյակների ընթացքում, դեռևս կան որոշ գենդերային բացեր:

Քաղաքական, կրթական և աշխատանքային ոլորտներում և գենդերային հավասարության օրենսդրական հենքում կանանց և տղամարդկանց միջև առկա բացերի ցուցիչ



Աղբյուրը՝ Կանայք խորհրդարանում (2012), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (2013, 2014), Մարդկային զարգացման զեկույց (2015), ՏՀԶԿ-ԳՆ (2012)

18 – Գենդերային հավասարության ընկալումը՝ 47% (2011)

Սա նկարագրական ցուցանիշ է, որը գնահատում է, թե որքանով դրական է ընկալվում և սատարվում գենդերային հավասարությունը հասարակության անդամների կողմից: 2011 թվականին Հայաստանի բնակչության 47 տոկոսը գենդերը դրական էր ընկալում՝ որպես զարգացման գործոն՝ համաձայն երեք հիմնական ոլորտներին առնչվող հարցերին տված պատասխանների, որոնք զուգահեռ են այս տարածաչափի համար օբյեկտիվ ցուցանիշներին՝ զբաղվածություն, մասնակցություն քաղաքականությանը և կրթություն:

Վերջնական արդյունքը բաղադրյալ ցուցանիշ է, որը հուշում է, որ բնակչության գրեթե կեսը գենդերը դիտարկում է որպես զարգացման համար դրական գործոն: Սուբյեկտիվ և օբյեկտիվ ցուցանիշների խաչաձև համեմատությունը ցույց է տալիս, որ թեև վերաբերմունքը և արժեքներն արտացոլված են օբյեկտիվ ցուցանիշներում շարունակական բացերի տեսքով, քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության նկատմամբ մեծամասնության դրական վերաբերմունքը չի վերածվում շոշափելի արդյունքների: Այս արդյունքները հուշում են, որ հիմնական ոլորտների նկատմամբ վերաբերմունքը թիրախող առավել ինտենսիվ ջատագովության ջանքեր են անհրաժեշտ:

Գենդերային հավասարությունը դրական գնահատելու աստիճանը



Աղբյուրը՝ Արժեքների համաշխարհային հարցում (2011)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշներ	Նկարագրություն
Ինքնարտահայտման ազատություն	• Տպագիր, հեռարձակվող և համացանցային լրատվության ազատության ցուցիչը
Հասանելիությունը և համացանցի տարածումը	• Համացանցի օգտատերերի տոկոսը
Գեղարվեստական բովանդակության բազմազանությունը Հանրային հեռուստատեսության ծրագրերում	• Տեղական գեղարվեստական ծրագրերի տարեկան ժամաքանակի հարաբերակցությունը տեղական պետական անվճար հեռուստաալիքներով հեռարձակվող գեղարվեստական ծրագրերի ժամաքանակին

Հաղորդակցությունը մտքերի, գիտելիքների, ուղերձների և տեղեկատվության փոխանակում է: Մշակույթը և հաղորդակցությունը սերտորեն փոխկապակցված են: Մշակույթը պահանջում է հաղորդակցության բազմազան ձևեր, որպեսզի այն բարգավաճի, կերտի, վերականգնվի և տարածվի: Միևնույն ժամանակ մշակույթը ձևավորում է հաղորդակցության բովանդակության մեծ մասը և ձևերը: Մշակույթը և հաղորդակցությունը միասին ունեն այն ներուժը, որը հնարավորություն կտա արտադրել և տարածել տեղեկատվություն, գիտելիք, գաղափարներ և բովանդակություն՝ նպաստելով անհատի հնարավորությունների ընդլայնմանը, այսպիսով՝ կառուցելով առողջ միջավայր մարդակենտրոն, ներառական զարգացման համար:

Հաղորդակցության տարածաշափն ուսումնասիրում է, թե որքանով է խրախուսվում հաղորդակցության և մշակույթի դրական փոխազդեցությունը՝ գնահատելով ինքնարտահայտման ազատության իրավունքը, տեղեկատվական և հաղորդակցության նոր տեխնոլոգիաների և դրանց բովանդակության հասանելիությունը և հանրային հեռարձակման շրջանակում տեղական արտադրության առաջարկը:

19 – Ինքնարտահայտման ազատություն՝ 37/100 (2016թ.)

Ինքնարտահայտման ազատությունը, լրատվամիջոցների ազատությունը և տեղեկատվության ազատ հոսքը պաշտպանվում է օրենքով և երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (2-րդ գլուխ, 42-րդ հոդված):



Աղբյուրը՝ Ազատության տուն (2016)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

Հայաստանի 37/100 գնահատականը փաստում է, որ **տպագիր, հեռարձակվող և համացանցային լրատվությունն այժմ «մասնակի ազատ» է:** Իրավական միջավայրի գնահատականն է 10/30, քաղաքական և տնտեսական միջավայրերինը՝ համապատասխանաբար 17/40 և 10/30: Այս գնահատականն արտացոլում է իշխանությունների կատարած ջանքերը, որոնք ուղղված են ապահովելու ազատ լրատվամիջոցների գործունեությունը և ինքնարտահայտման ազատության նկատմամբ հարգանքը և խրախուսումը: Գաղափարների, գիտելիքների, տեղեկատվության և բովանդակության ազատ հոսքի շնորհիվ այդ ազատությունները կառուցում են ազատ և մասնակցային հասարակություններ, ինչպես նաև հանդես են գալիս որպես ստեղծարար և մշակութային բազմազանության կարևոր դերակատարներ:

Եվրոպական արժեքների վերաբերյալ 2008 թվականի հարցումը ներառում էր մամուլի նկատմամբ մարդկանց ունեցած վստահության մասին հարց: Հայաստանի արդյունքը ցույց տվեց, որ բնակչության 5,7 տոկոսը «մեծապես» վստահում էր մամուլին, 27,7 տոկոսը՝ «բավականին շատ», 39,1 տոկոսը՝ «ոչ շատ», 27,6 տոկոսը՝ ընդհանրապես չէր վստահում մամուլին: Նույն հարցը ներառված էր Համաշխարհային արժեքների վերաբերյալ հարցման (Հայաստան 2011թ.) մեջ: Բնակչության 3,2 տոկոսը «մեծապես» վստահում էր մամուլին, 24.3 տոկոսը՝ «բավականին շատ» էր վստահում, 44,9 տոկոսը՝ «ոչ շատ», իսկ 24,2 տոկոսն ընդհանրապես չէր վստահում մամուլին:

20 –Հասանելիությունը և համացանցի տարածումը՝ 58.25% (2015թ.)

Համաձայն Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) տվյալների՝ 2015 թվականին Հայաստանում 16-74 տարեկան բնակչության 58.25 տոկոսն օգտվել է համացանցից: Համացանցի օգտատերերի թվի աճն զգալի է հաշվի առնելով, որ 2000 թվականին բնակչության միայն 1.30 տոկոսն է օգտվել համացանցից, իսկ 2005 և 2010 թվականներին համապատասխանաբար 5.25 և 25 տոկոսը: Այսպիսով, 175 երկրների շարքում Հայաստանը ՏՀՏ զարգացման ցուցիչով 71-րդ տեղում է:

2014 թվականին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը հաշվարկել է վերջին 12 ամիսների ընթացքում համացանցից օգտվող ընտանիքի անդամների տոկոսը: Արդյունքը ցույց տվեց, որ համացանց են օգտագործել ընտանիքի անդամների 54.6 տոկոսը: Նկատելի տարբերակում կա ըստ բնակավայրի: Քաղաքային բնակավայրերում բնակչության 61.0 տոկոսն է օգտվել համացանցից, մինչդեռ գյուղական համայնքներում օգտատերերի թիվը կազմել է բնակչության 43.6 տոկոսը:



Աղբյուրը՝ Տեղեկատվական հասարակության գնահատման տարեկան զեկույց (2016)
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

21 – Գեղարվեստական բովանդակության բազմազանությունը Հանրային հեռուստատեսության ծրագրերում՝ 42.55% (16.01.2017թ.-22.01.2017թ.)

Տեղական գեղարվեստական ծրագրերի տարեկան քանակի կամ տեղական հեռուստաալիքներով հեռարձակվող ժամաքանակի մասին տեղեկատվություն չկա: CDIS հարցման հայաստանյան թիմի կողմից հաշվարկներ են կատարվել՝ հանրապետական ծածկույթ ունեցող 7 ազգային հեռուստաալիքների մեկշաբաթյա ծրագրի (16.01.2017թ.-22.01.2017թ.) ուսումնասիրության հիման վրա:

Մեկ շաբաթվա ընթացքում եղել է 510 գեղարվեստական ծրագիր (լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր, հեռուստասերիալներ և մուլտֆիլմեր): Այդ ծրագրերից 217-ը տեղական արտադրության են: Այդ ծրագրերից 20-ը լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր էին, 3-ը՝ անիմացիոն ֆիլմեր, իսկ մնացած 194-ը՝ հեռուստասերիալներ:

Այսպիսով՝ գեղարվեստական ծրագրերի ընդհանուր թվի 42.55 տոկոսը տեղական արտադրության են, ինչը վատ արդյունք չէ, թեև համատեղ արտադրություններ չկային:

Տեղական գեղարվեստական ծրագրերի տարեկան ժամաքանակի հարաբերակցությունը տեղական պետական անվճար հեռուստաալիքներով հեռարձակվող գեղարվեստական ծրագրերի ժամաքանակին



Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

Ազգային ալիքների հեռուստածրագրերի մեկշաբաթյա վերլուծությունը ցույց է տալիս, որ 1,403 ծրագրերից 1,046-ը տեղական արտադրության են, ինչը կազմում է ընդհանուր հեռարձակումների 74.55 տոկոսը: Տեղական ծրագրերի ամենամեծ մասն ունի ընթացիկ զարգացումներին վերաբերող բովանդակություն (33.08%): Գեղարվեստական բովանդակությունը երկրորդն է (20.75%), ժամանցայինը՝ երրորդը (16.25%): Տեղական արտադրության ծրագրերի 12.24 տոկոսն ունի կրթական բովանդակություն, 9.65 տոկոսը՝ սոցիալական, 4.59 տոկոսը՝ փաստավավերագրական: Ծրագրերի 3.44 տոկոսն ունի հոգևոր բովանդակություն (հիմնականում հեռարձակվում է «Շողակաթ» ալիքով):

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առանցքային ցուցանիշներ	Նկարագրություն
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	Ժառանգության կայունության ապահովման բազմաչափ շրջանակի մշակման ցուցիչ

Այս ցուցանիշը երեք հիմնական բաղադրիչների՝ 1) ազգային և միջազգային ռեգիստրների և գույքագրումների ձևավորման ու հետագա զարգացման, 2) բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ ժառանգության պաշտպանությանը, պահպանմանը, և կառավարմանը, ինչպես նաև կայունության խթանմանն ուղղված ջանքերի և 3) ժառանգության անվնաս պահպանմանն ու վերականգնմանը միտված իրազեկության բարձրացման և աջակցության մոբիլիզացման համար ստեղծված ռազմավարությունների վերլուծության միջոցով ներկայացնում է ժառանգության կայունության պաշտպանության և հանրահռչակման համար իրականացվող հանրային գործողությունների ուժեղ և թույլ կողմերի ընդհանրական պատկերը։

22 – Ժառանգության կայունությունը՝ 0.71/1 (2016թ.)

Հայաստանի 0.71/1 արդյունքն արտացոլում է հայաստանյան իշխանությունների կողմից ժառանգության կայունության պաշտպանությանը, պահպանմանը և հանրահռչակմանը տրված բարձրամակարդակ առաջնահերթությունը։ Ամենաբարձր միավորը համապատասխանում է իրազեկության բարձրացման գործողություններին՝ 0.87/1, որին հետևում է գույքագրումների մշակումը՝ 0.70/1, իսկ վերջին տեղն զբաղեցնում են ժառանգության պահպանությանն ու կառավարմանն ուղղված գործողությունները՝ 0.59/1։ Այս արդյունքը բարելավելու համար Հայաստանն առաջին հերթին պետք է մշակի լրացուցիչ գործողություններ՝ կատարելագործելու ժառանգության կառավարման իր աշխատակարգերը, քանի որ հիմնական քաղաքականության և կոնկրետ միջոցառումների առկայությունը որոշիչ է ժառանգության կայունության համար։

Հայաստանը նկարագրական գրանցումների համար ստացել է 0.70/1 միավոր, ինչը վկայում է իշխանությունների՝ ժամանակակից ազգային և միջազգային գրանցման համակարգերի ապահովման ջանքերի մասին։ Դրանք հիմնականում իրականացվում են ազգային մակարդակում։

Ժառանգության պաշտպանության, պահպանման և կառավարման համար ստացած 0.59/1 միավորը բավական ցածր է, հիմնականում այն պատճառով, որ ցածր է համայնքային ներգրավվածությունը, գիտելիքների մակարդակը և կարողությունների զարգացումը։ Որոշումների կայացման գործընթացներում համայնքային ներգրավվածության խթանումը ժառանգության՝ ժողովրդավար և գիտակցված կառավարման հիմնական տարր է։ Կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագրերը, իրենց հերթին, ապահովում են ժառանգության կառավարման մասին գիտելիքների փոխանցումը հասարակության տարբեր շերտերի։

Աջակցության փոխանցումն ու համախմբումը 3 տարածաչափերից ամենաբարձր միավորն է ստացել՝ 0.87/1: Այն վկայում է Հայաստանի՝ ժառանգության պահպանման կարևորության մասին իրազեկության բարձրացման, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածում ստացված աջակցության հաջողված քաղաքականության մասին՝ ապահովելու պատշաճ գործունեություն ոչ միայն քաղաքական, այլև ոչ ֆորմալ մակարդակներում:

Ժառանգության կայունության ապահովման բազմաչափ շրջանակի մշակման ցուցիչ

Վերջնական արդյունք՝ 0,71/1



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն
Մեթոդաբանությունը՝ UNESCO CDIS

Զեկույցը մշակվել է ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ: Սույն զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Հրատարակությունում զետեղված տեղեկատվության և տեսակետների համար ողջ պատասխանատվությունը կրում են հեղինակները:

Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի նպատակն է՝ ապահովել մշակութային ու ստեղծարար ոլորտների աջակցությունը, ինչպես նաև նպաստել նրանց ներդրման մեծացմանը Հայաստանում, Բելառուսում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում՝ կայուն մարդասիրական, սոցիալ-տնտեսական զարգացման մեջ:

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից